28.10.2022
350-73

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-մայոր Վահե Ղազարյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղազարյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2020, 2021, 2022 թվականներին համակարգչային հանցագործության քանի՞ դեպք է գրանցվել Հայաստանում:
2. Այդ դեպքերից քանի՞սն են առնչվում անձնական տվյալների ապօրինի մշակմանը:
3. Գրանցված հանցագործություններից քանի՞սն են բացահայտվել իրավապահ մարմինների կողմից:
4. Խնդրում ենք տվյալները տրամադրել առանձնացված՝ ըստ տարիների:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը ***պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am